ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 3-ի արտահերթ նիստի օրակարգը.

1)Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 107-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/զեկուցող՝ Վ. Ապրեսյան/

2)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 98-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

3)Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու մասին

/Զեկուցող՝ Ե. Գրիգորյան/

4)Սպիտակ համայնքի արոտավայրերից և խոտհարքներից օգտվելուն համաձայնություն տալու և վճարի չափ սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ե. Գրիգորյան/

5)Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի թիվ 20-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

/Զեկուցող՝ Ե. Գրիգորյան/

6)Արգամ Օնիկի Մաթոսյանին առանց մրցույթի կառուցապատման իրավունքով հողամաս տրամադրելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ե. Գրիգորյան/